

21 Օգոստոս

Կայսերական զորքերն այսօր մեծ ուրախութեան մէջ են:

Յունիսի ամսականն այսօր վճարուեցաւ իրենց:

Թուրք լրագիրներն գոհութեամբ կհրատարակեն այս լուրն եւ չեն կարմրիր:

Թերեւս ասոնք կը կարծեն, թէ ուրիշ տէրութիւններն իրենց զորքերուն ամսականներն չորս ամիս ետքը կը վճարեն:

**

Դեսպաններն նոր ծրագիր մը մատուցին Բ. Դրան՝ Հայաստանի խնդրոյն նկատմամբ:

**

Լրագիր մը կը ծանուցանէ թէ Իրլանտիոյ մէկ քաղաքին մէջ Մայր Աստուածածին հրաշքով երեւցած է երկու հարիւր աղաներու:

Անցեալներն հոս ալ այնպիսի բան մը երեւեցաւ ո՛չ աղաներու, այլ Մեծն Բրիտանիոյ դեսպան Պ. Կօշէնի. սակայն քանի մը չարամիտ անձեր ըսին, թէ պալատէն փախած կին մ'էր այն, որ թագուհւոյն կառավարութեան Պօլսոյ դեսպանին ծունկներուն փարելով ազատութիւն խնդրած է:

23 Օգոստոս

Տպագրական տեսչութիւնը թող կու տայ թուրք լրագիրներուն, որ ամեն թշնամանք եւ զրպարտութիւն ընեն հայ եւ յոյն պատրիարքներուն, իսկ բնաւ թոյլ չտար, որ քրիստոնէայ մամուլն թուրք մամլոյն պատասխանէ քաղաքավար լեզուաւ:

Օսմանլի անուն լրագիրն Յիսուսի դէմ ալ յարձակուեցաւ, եւ տպագրական տեսչութիւնն լռութիւն պահեց:

Իսկ երբ *Նէօլօղոս* յոյն լրագիրն *Թերձէմանը Հաքիքաթի* դէմ յոյն պատրիարքարանն պաշտպանել սկսաւ՝ երկու ամսուան համար դադարեցաւ տպագրական տեսչութեան կողմէն:

Ահա մամլոյ վերաբերութեամբ հաւասարութիւնն, զոր կը վայելենք Թուրքիոյ մէջ: